

Հովհ. Թորոմանյան

ՄԵՐԲԱԿԱՆ
ԵՊՈՍԻՅ

ՊԵՏԼՐԱՏ

31 JAN 2018

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՍԵՐԲԱԿԱՆ ԵՊՈՍԻՑ


(ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ՌՈՒՍԵՐԵՆԻՑ)

ՆԿԱՐՆԵՐԸ

Կ. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆ



ՀԼԿՅՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱԳԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1989



ՄԱՐԿՈՆ ՌԱՄԱԶԱՆԻՆ ԳԻՆԻ ՅԵ ԽՄՈՒՄ

Սուլթան Սուլեյման հրաման հանեց,
Վոր իրեն յերկրում վոչ մի հպատակ
Ռամազան որը գինի չխմի,
Կանաչ դոլամա¹⁾ չհագնի վերից,
Կողքիցը պողպատ թուր չըկախ անի,
Շուրջպարի չերթա աղջիկների հետ:
Թուրը կախ արավ Մարկոն իր կողքից,
Կանաչ դոլամա հագավ վերեից,
Ռամազան որը գինի յե խմում,
Կանչում, հավաքում անցվոր ու խոջա²⁾,
Խմում է, թասը նրանց է տալիս:
Գալիս են թյուրքերն իրենց սուլթանին.
— Սուլթա՛ն, մեր տերն ես, մեր ծնողն ես դու.
Ձե՞ վոր դու ինքդ հրամանք արիր,
Վոր մեր ես տոնին, ես ծանր պահեին
Վոչով բերանը գինի չտանի,
Վոչով դոլամա չհագնի կանաչ,
Վոչով կողքիցը թուր չըկախ անի,


¹⁾ Դոլամա — վերարկու: ²⁾ Խոջա — վաճառական:

Շուրջպարի չերթա աղջիկների հետ:
 Մարկոն աղջկանց հետ շուրջպարի կերթա,
 Մարկոն կողքիցը թուր ե կախ արել,
 Մարկոն հագել ե կանաչ դուամա,
 Ռամազան որը գինի յե խմում:
 Գլուխը քարը՝ թե մենակ խմեր,
 Անցվոր ու խոջա կիտում ե գլխին,
 Համ ինքն ե խմում, համ նրանց տալիս»:
 Սուլթան Սուլեյման ես լսեց թե չե՝
 Յերկու սուրհանդակ զրկեց Մարկոյին:
 — Գնացե՛ք, ասով, իմ արագ տղերք,
 Գնացե՛ք շուտով Մարկոյին ասեք՝
 Թե՛ կանչում ե քեզ սուլթանն անհապաղ»:
 Գնացին արագ սուլթանի մարդիկ
 Շիտակ Մարկոյի վրանը մտան:
 Խմում ե Մարկոն դավաթն առաջին,
 Մեջը կըլինի տառերի ու ռիթմ¹⁾:
 — Լսի՛ր, ասացին, քաջագուն Մարկո,
 Սուլթանը զրկեց մեզ քո յեռեկից,
 Վե՛ր կաց տեղիցդ, գնանք սուլթանին»:
 Սաստիկ բարկացավ Մարկոն ես խոսքից,
 Վեր կալավ ծանր դավաթն առաջի
 Ու՝ առ հա կըտաս՝ սրանց գլխներին:
 Գլուխ ու դավաթ ջարդ ու փուրդ յեղան,
 Արյուն ու գինի խառնվեց իրար:
 Այա թե գնաց Մարկոն սուլթանին.
 Գնաց աջ կողմը նստեց ծունկ ծնկի,
 Սամուր գլխարկը քաշեց աչքերին,
 Իր ծանր գուրդը գրեց առաջին,
 Սուր թուրն ել ուսին բռնած պատրաստի:
 Ու եսպես խոսեց սուլթանը թյուրքի:
 — Իմ հոգեվորդի, քաջագուն Մարկո,
 Դու հո լավ գիտես՝ կարգ եմ դրել յես,
 Վոր մեր մեծ պահքին, Ռամազան որը՝
 Վոչով բերանը դավաթ չտանի,

1) Ռիթմ — ծանրության չափ:

Վոչով դուամա չհագնի կանաչ,
 Շուրջպարի չերթա աղջիկների հետ:
 Իմ ծառաները ինձ մոտ են դալիս՝
 Վատ խաբարներ են բերում քեզանից:
 Դու պար ես դալիս, իբրեւ, շուրջպարի,
 Պողպատի թուր ես կապել քո մեջքին,
 Կանաչ դուամա հագել վերեկից,
 Ռամազան որը գինի յես խմում,
 Անցվոր ու խոջա կանչում՝ խմեցնում:
 Ի՞նչ ես գլխարկդ քաշել աչքերիդ,
 Ինչո՞ւ յես բերել քո գուրդը քեզ հետ,
 Ինչո՞ւ յես թուրդ բռնել պատրաստի»:
 Պատասխան տվեց Մարկոն սուլթանին.
 — Ո՛վ իմ հոգեհայր, սուլթան Սուլեյման,
 Իմ հավատն եսպես ինձ թույլ ե տալիս,
 Յես ել խմում եմ ձեր պահքի որը:
 Մենակ խմելը անվայել ե ինձ,
 Յերբ ուրիշները մտիկ են անում,
 Յես ել կանչում եմ անցվոր ու խոջա,
 Վոր մտիկ չանեն, նրանք ել խմեն:
 Կանաչ դուամա՝ ենդուր եմ հագնում,
 Վոր ջահել մարդ եմ ու սագում ե ինձ:
 Կողքիցս յեթե թուր եմ կախ արել,
 Իմն ե, իմ փողով յես ինքս եմ առել:
 Աղջիկների հետ թե պար եմ դալիս,
 Ենդուր, վոր ազատ մարդ եմ ամուրի,
 Ինչպես վոր ինքդ յեղել ես մի որ:
 Գլխարկս ենդուր եմ քաշել աչքերիս,
 Վոր չեմ դիմանում, ճակատս երվում ե
 Յերբ վոր խոսում եմ սուլթան հորս դեմ:
 Իմ գուրգն ել հետըս ենդուր եմ բերել,
 Ու թուրս պատրաստ պահում եմ եսպես,
 Վախում եմ հանկարծ կռիվ պատահի:
 Յեվ՝ յեթե կռիվ պատահի հանկարծ՝
 Վա՛յ նրան, ով մոտ կըլինի Մարկոյին»:
 Չորս կողմը նայեց սուլթանը եստեղ,
 Տեսնի թե ո՞վ կա մոտիկ Մարկոյին:

Տեսա՛վ, վոր վոչով չկա վրանում
 Ու ինքն է մենակ մոտիկ Մարկոյին:
 Ահից սկսեց քաշվել յետ ու յետ,
 Մարկոն եւ առաջ՝ դեպի սուլթանը,
 Տարա՛վ ու սեղմեց վրանի պատին:
 Սուլթանը ձեռքը դրպանը կոխեց,
 Մի հարյուր դուկատ հանեց դրպանից,
 Հանեց, դեմ արա՛վ ջահել Մարկոյին.
 — Ա՛ռ, ասա՛վ, Մարկո, տար՝ դինի խմիր»:



ՄԱՐԿՈՆ ՎԵՐԱՑՆՈՒՄ Ե ՊՍԱԿԻ ՀԱՐԿԸ

Վաղ լուսաբացին վեր կացա՛վ Մարկոն,
 Չին հեծա՛վ, չափեց դաշտը Կոսովի:
 Գրնաց, վոր հասա՛վ Սերվանա դետին՝
 Դիմացը յեւա՛վ մի սիրուն աղջիկ:
 — Բարի ո՛ր, ասա՛վ, Կոսովցի քուրի՛կ»:
 Սիրուն աղջիկը խոր գլուխ տը՛վեց.
 — Բարին արե՛վիդ, անձանոթ կտրի՛ճ»:
 Ու եսպես խոսեց Մարկոն քաջազուն.
 — Քուրի՛կ, դու ջահել, եղքան դեղեցիկ,
 Հասակդ նոճի, այտերդ կարմիր,
 Ափսո՛ս, վոր մենակ ծամդ է խանդարում,
 Ինչո՞ւ յե քուրիկ, ծամդ ճերմակել,
 Բախտդ, յերևի, թուել է քեզնից:
 Դու ի՞նքդ ես արդյոք ցալի հանդիպել,
 Թե քո խեղճ մերը, թե հերը՝ ծերուկ»:
 Կոսովի աղջիկն արտասուք թափեց,
 Արտասուք թափեց ու եսպես ասա՛վ.
 — Չե՛, ախպերացու, անձանոթ կտրի՛ճ,
 Յես չեմ խորտակել իմ բախտն իմ ձեռքով,
 Փորձանքը ինքն է յեկել իր վոտով:
 Ես իննը տարի կըլինի ուղիդ,

Հեռվից արարը մեզ մոտ է յեկել,
 Կապալով Կոստյն տուել սուլթանից:
 Դրբել է յերկիրն ամբողջ հարկի տակ,
 Ուտում է, խրմում դաշտը բովանդակ:
 Մի ուրիշ հարկ է դրել մեզ վրա.
 Ամեն հարանացու, վոր մարդու գրնա,
 Պետք է վրձարի յերեսուն վոսկի.
 Ամեն փեսացու, վոր աղջիկ ուզի,
 Յերեսուն վոսկի, չորան ել ավելի:
 Ով եսքան վոսկի ուներ գրքականում,
 Ով եսքան վոսկի արվեց արարին՝
 Ամենքը դարձան մարդու-վորդու տեր:
 Յես վորք աղջիկ եմ. յեղբայրներ ունիմ,
 Նըրանք ել աղքատ, ձեռքները պակաս,
 Չեն կարող եսքան հարկ տան արարին:
 Սըրա համար չեմ գընում յես մարդու,
 Չեմ կարում դառնամ տան ու տեղի տեր.
 Ես է իմ ցավը, անծանոթ ախպեր:
 Բայց թե յերանի ես լինեք մենակ,
 Աղջիկն իր տանը նստեր անպըսակ,
 Կամ աղջիկ չառներ արդան նորահաս:
 Ուրիշ մի ցավ կա, անարդ առավել,
 Արարը ուրիշ մի հարկ է դրել,
 Վոր նոր պըսակված հարսին ու փեսին
 Դիչերը տանեն արարի մեծին,
 Ինքը նոր հարսին փայի, փայիայի,
 Իրեն մարդիկը ջահել փեսային:
 Ամեն տուն, ուր կան աղջիկ ու տղա,
 Ղրկել են հերթով ամենքն արարին:
 Յեկել է հերթը ինձ հասել հիմի,
 Վոր սեվ արարին գընամ յես ետը:
 Ու նրա կինը դառնամ յես ետը:
 Ու միտք եմ անում ինքըս իմ միջին.
 Տե՛ր աստված, արդյոք ի՞նչ անեմ հիմի.
 Ծըմա՞կը գընամ, թոկ գըցեմ, կախվե՞մ,
 Թե՞ գետը գընամ, ջուրն ընկնեմ, խեղդվե՞մ.
 Ինչ ել վոր լինի՝ մեռնեմ, վերջանամ,

Բան չար թշնամու տարփածուն դառնամ»:
 — Բուրի՛կ ջան, ասավ Մարկոն դյուցազուն,
 Մի՛ կըտրիր հույսդ, համբերող յեղիր.
 Վո՛չ ջըրում խեղդվիր, վո՛չ ծառից կախվիր,
 Աւ մի կորցընիր ինքդք ջո հոգին:
 Յույց տուր ինձ մենակ՝ տեղը արարի,
 Ռ՞ւք է արարը, վո՞րտեղ է կենում.
 Խոսելիք ունի՞մ ետը նըրա հետ»:
 Պատասխան արվեց կույսը Կոսովի.
 — Ախպե՛ր ջան, ասավ, անծանոթ կըտրի՞մ,
 Ինչո՞ւ յես հարցնում տեղը արարի,
 Արարի տեղը դատարկ տեսնեմ յես:
 Չլինի՞ թե դու ել աղջիկ ես ուզել,
 Գընում ես, վոր տաս հարկը պըսակիդ:
 Չլինի՞ թե ջո մոր մինուճարն ես դու.
 Յեթե արարը տա քեզ ըսպանի՝
 Խեղճ պառավ մերըդ ի՞նչ պիտի անի»:
 Աւ Մարկոն ձեռը գըրպանը տարավ,
 Յերեսուն վոսկի հանեց գըրպանից,
 Տըվեց Կոսովի տըխուր աղջկան:
 — Աւ, բուրի՛կ, բըռնիր յերեսուն վոսկին,
 Դարձիր, յետ գընա ջո տունը ճերմակ,
 Ետեղ ըսպասիր ջո կարմիր բախտին.
 Յույց տուր ինձ մենակ տունը արարի,
 Կերթամ ջո հարկն ել կըտամ յես նըրան»:
 — Արարը, ախպե՛ր, տուն ու բակ չունի:
 Նայիր դաշտն ի վար, դատարկ ու դուրան.
 Մի տեղ է մենակ դըրոջ ծածանում,
 Ես սեվ արարի դըրոջն է մետաքս,
 Ետեղ է նըրա վըրանը դարկած,
 Վրանի շուրջը կանաչ ցանկապատ,
 Ամբողջ ցըցահան շարած գըլուխներ,
 Մեր կըտրիճների գլուխներն անբախտ:
 Բոռսուն պահապան ունի արարը,
 Հըսկում են անքուն դիչեր ու ցերեկ»:
 Հենց վոր վերջացավ խոսքը աղջկա,
 Շուտ արվեց Մարկոն գըլուխն իր ձիու,

Քըչեց Կոստովի արձակ դաշտն ի վար:
Տաքացրեց, լըցրեց իր հուր Շարացին:
Վոռների տակից կըրակ է թըռչում:
Պընչերից բոց է յեղնում կապուտակ:
Գընում է Մարկոն սիրտը լեւի-լեցուն,
Իր ալտերն ի վար արցունք է հոսում,
Արցունքի տակից եսպես է խոսում:
— Հե՛յ, դու լայնարձակ սուրբդաշտ Կոստովի
ես ի՛նչ ես տեսնում, ի՛նչ տեղ հասար դու
Մեր թագից հետո, մեր փառքից հետո:
Արաքն յեկել ե՛՝ չոքել քեզ վըրա:
Ձեմ կարող տանել ես ցավն յես դաժան,
Ձեմ կարող տանել անարգանքն ես սե,
Ես տուրքն անորեն, ես հարկն անպատիվ,
Վոր աղջիկ-տըղա պըղծվեն սերբերի:
Բույրե՛ր, ձեր վոխը եսոր յես կառնեմ,
Ձեր վոխը կառնեմ, կամ թե կը մեռնեմ»:
Ու քչեց շիտակ վըրանի վըրա:
Պահնորդ արարներ հեռվից աչքեցին
Ու եսպես ասին արարի մեծին:
— Մեր տե՛ր, ասացին, մեր իշխան արաք,
Կապույտ նոթույգը հեծած ամեհի,
Կոստովի դաշտով կըրակի նըման,
Մի արմանք-զարմանք կտրիճ է գալի:
Կըրակ է թըռչում նըթույգի վոտքից,
Պընչերից ծուխ է յեղնում կապուտակ:
Մեզ վըրա յե սա քըչում, շիւի-շիտակ»:
Արարի մեծը պատասխան տվեց.
— Հե՛յ, ասավ, տղե՛րք, իմ քառսուն քաջեր,
Ո՞վ կարա իր ձին քըչի մեզ վըրա:
Նոր նըչան դըրած մի ջահել է դա,
Իրեն հարսանքի հարկն է գալիս տա:
Ափսոսն է գալիս յերեսուն վոսկին,
Երվում է իր մեջ՝ ու քըչում է ձին:
Դուրս յեկեք դըրա առաջը շուտով
Գլուխ վեր բերեք հարգանքով, պատվով,
Ոգնեցեք, ձիուց իջեցրեք իրեն,


Ձին ու ղենքերը առեք իր ձեռքից,
Ու իրեն բերեք վըրանը— ինձ մոտ:
Յես դըրա վոսկին չպիտի առնեմ,
Դըրա գլուխը պետք է յես առնեմ,
Ու խաղուն կապույտ նըթույգը տակի»:
Ասավ ու խըմբով ծառաներն յեղան,
Վոր ձեռքիցն առնեն ձին ջահել հյուրի,
Բայց հենց մոտեցան, տեսան Մարկոյին,
Ել սիրտ չի արին առաջը գընան,
Փախան, վըրանը մըտան վերըստին,
Թագ կացան յետեւին արար իշխանի,
Իրենց թըրերը ծածկեցին փեշով:
Ներս մտավ Մարկոն բակը արարի,
Յած իջավ ձիուց վըրանի շեմքում:
— Գընա՛, իմ Շարաց, քեֆ քաշի՛ր, ասավ,
Քեֆ քաշի՛ր եստեղ, բակումն արարի,
Բայց, տե՛ս, դըռնիցը հեռու չըգընաս,
Գուցե թե շուտով հարկավոր լինիս»:
Ու մըտավ Մարկոն վըրանն արարի:
Միբուն սերբուհին առաջին կանգնած՝
Արարը նստել գինի յե խըմում:
Ներս մըտավ Մարկոն ու բարեվ տըվեց.
— Բարի որ, տանտե՛ր, բարի աջողում»:
Արարը սիրով բարեվը առավ.
— Աստծու բարին քեզ, անձանթ կտրիճ.
Նըստի՛ր, մի բաժակ դատարկիր մեզ հետ,
Հետո կը պատմես՝ ինչու յես յեկել»:
Յետ դառավ Մարկոն պատասխան տըվեց.
— Գինի խմելու ժամանակ չունիմ,
Յեկածս ել արդեն բարի յե ինքնին.
Սըրանից բարի ել ինչ կը լինի.
Աղջիկ եմ ուղել, պըսակ եմ գընում,
Հարսանքավորըս կանգնած է ճամբին,
Յեկա՝ վըճարեմ տուրքը պըսակի,
Վճարեմ ե՛՝ ինձ, ե՛՝ հարսիս համար,
Շուտ արա, վոր յես չընկընենք մեր ճամբից,
Յես քանի՞ վոսկի պիտի վըճարեմ»:

Ես խոսքի վերա արարը ասավ,
 — Թե քանի վոսկի — դու ինքըդ գիտես.
 Հարսը տալիս է յերեսուն վոսկի,
 Փեսան յերեսուն, չորս ել ավելի:
 Բայց յես տեսնում եմ՝ կտրիճ մարդ Ես դու,
 Հարյուր ել վոր տաս՝ ի՞նչ կա քեզ համար»:
 Ու Մարկոն ձեռը գրպանը տարավ,
 Հանեց, չըպրտեց մի յերեք վոսկի:
 — Հավատա՛, ասավ, ել ավել չունիմ:
 Թե կուզես՝ մընա ըստասիր մի քիչ,
 Մինչև պսակից յետ դամ հարսիս հետ,
 Բաժինքը վողջ քեզ, հարսը ինձ լինի»:
 — Գարշելի՛, Թըշչաց արարն ոճի պես.
 Սակարկում ես դու... դու ծաղրո՞ւմ ես
 ինձ...

Յես չեմ հավատում ձեզնից վող մեկին»:
 Ասավ վեր կալավ իր գուրգն ահագին
 Չարկեց Մարկոյին յերեք-չորս անգամ:
 Չարկեց ծիծաղեց Մարկոն քաջագուն:
 — Հե՛յ, դու սեւ արար, հե՛յ արար, ասավ,
 Կատա՞կ ես անում, թե՞ ճիշտ ես զարկում»:
 Ու ոճի նման արարը Թըշչաց.
 — Կատակ չեմ անում, սըրտով եմ զարկում»:
 — Ենպես կարծեցի կատակ ես անում:
 Դե վոր եղպես ե, սըրտով ես զարկում,
 Ինձ հետ ել մի գուրդ կըլինի յերեւի,
 Գանի անգամ վոր դու ինձ զարկեցիր,
 Ենքան անգամ ել յես քեզ կը զարկեմ.
 Նըրանից հետո դաշտը դուրս կըգանք,
 Դաշտը կը ջուկի կտրիճը մեր մեջ»:
 Ասավ ու առավ իր գուրդը մեխված
 Ու ենպես զարկեց արարի մեծին,
 Վոր գլուխն իսկույն թըռավ ուտերից:
 Նայեց, ծիծաղեց Մարկոն քաջագուն:
 — Տեր աստված, ասավ, փառքդ շատ լինի,
 Ինչքան հեշտ թըռավ գըլուխն արարի,
 Առեա գըլուխ չեր ունեցել իսկի»:

Ապա թե հանեց թուրը հալյունի,
 Վողջ ծառաներին հընձեց խոտի պես,
 Քառասուն հոգուց չորսին թող արավ,
 Վոր գընան անցնեն աշխարհքից աշխարհք,
 Իր ու արարի պատմությունն անեն:
 Բակի շուրջ շարած գըլուխներն առավ,
 Ասքով ու փառքով Թաղեց հողի մեջ,
 Վոր ցին ու ագռավ չգան, չկըտցեն,
 Նըրանց փոխարեն՝ արարի մարդկանց
 Գլխները զարկեց, շարեց բակի շուրջ,
 Ու տիրեց գանձին արարի դիզած:
 Չորս արարին ել, վոր թողեց կենդան,
 Չորս կողմի վերա գըրկեց աշխարհքի,
 Վոր գընան, անցնեն դաշտը Կոսովի,
 Պատմեն ու եսպես կանչեն ամեն տեղ,
 — Վորտեղ վոր հասած աղջիկ կա տան մեջ՝
 Արձակ-համարձակ թող մարդու գընա,
 Ու թող պըսակվեն սերբերը աղատ,
 Վերջացա՛վ, ջընջվե՛ց հարկը պըսակի,
 Մարկոն վըճարեց ամենքի համար»:





ԹԵ Ի՞ՆՉ ՈՒՂԱՐԿԵՑ ԹՈՒՐԳԻ ՍՈՒԼԹԱՆԸ՝
ՄՈՍԿՈՎԻ ՅԱՐԻ
ԸՆԾԱՆԵՐԻ ՓՈԽԱՐԵՆ

Քաղաքից քաղաք, աշխարհից աշխարհք
Թուղթ անցավ յեկավ Մոսկովու յերկրեն,
Յեկավ ու յեկավ, հասավ Ըստամբուլ:
Ու դրին թուղթը վոսկի կառնթում
Ու բերին իրեն՝ թուրքի սուլթանին,
Ու թղթի հետ ել սուլթանի համար
Շատ թանգ ընծաներ արքային վայել:
Ու վոսկի սինի, մեջն վոսկի մեջիդ,
Մեջիդի շուրջը պատ յեկած մի ոճ,
Են ոճի գլխին դրած անգին քար,
Վոր դիչերն ենպես պարզ լուս եր տալիս՝
Վոնց վոր ցերեկը լուսն արեգակի:
Ու Իբրահիմին, սուլթանի վորդուն,
Յերկու թանկագին թրեր կային սուր,
Դաստակներն ամբողջ դուռ մաքուր վոսկուց,
Ամենքի վրա մի-մի անգին քար:
Սուլթանի կընոջն վոսկի որորոց,
Գըլխավերևը քաջահավ բաղեն:

Վոր ես ընծաներն առավ աննրման
Ընկավ սուլթանը մըտքի ծովի մեջ.
Ի՞նչ ղըրկի արդյոք Մոսկովի ցարին
Եսքան թանգագին ընծաների դեմ:
Միտք արավ ու միտք, վոչինչ չգտավ:
Ով մոտը յեկավ ամենքի առջև
Պատմեց, պարծեցավ, թե ինչ ընծաներ
Ըստացավ ինքը Մոսկովի ցարից,
Բայց վոչով ասել չի կարողանում
Թե ինչ ուղարկի դրանց փոխարեն:
Ներս յեկավ ահա Ղուչրեգի փաշեն,
Նրա առջև պատմեց, պարծեցավ.
Փաշից յետն յեկան Սոջան ու Ղադին:
Յերկիր պագեցին ու համբուրեցին
Ծունկն ու փեշերը իրեն սրբազան.
Նրանց առջև ել պարծեցավ նույնպես,
Ապա թե եսպես խորհուրդ հարցրեց.
— Ո՛վ իմ ծառաներ, Սոջա ու Ղադի,
Յես ի՞նչ ուղարկեմ ցարին սրանց դեմ,
Վոր ցարը ինձնից մընա բավական»:
Պատասխան տվին Սոջան ու Ղադին.
— Տեր սուլթան, ասին, ըստորուկն ենք մենք,
Մենք մըտածելու իրավունք չունենք.
Լավ կանես կանչես ծեր պատրիարքին,
Նա հեշտ կիմանա, հեշտ ել քեզ կասի
Թե ինչ ուղարկես Մոսկովի ցարին,
Վոր ցարը քեզնից մընա բավական»:
Եսպես վոր ասին՝ լոեց սուլթանը,
Իրեն կավասին¹⁾ ուղարկեց իսկույն
Ու մոտը կանչեց ծեր պատրիարքին:
Ու, յերբ պատրիարքն յեկավ իրեն մոտ,
Յույց տվավ նրան ընծաներն ամեն,
Ու շատ պարծեցավ, ու եսպես ասավ.
— Ո՛վ դու իմ ծառա, ծերուկ պատրիարք,
Չե՞ս կարող արդյոք սովրեցնել դու ինձ

¹⁾ Կավաս — վոստիկան, սուրճանդակ:

Թե ինչ պարզենք զբերեմ փոխադարձ,
Վոր իմ ուղարկած թանգ պարզենքից
Գոհ մընա հըզոր ցարը Մոսկովի»:

Ասով՝ ու ծերը կամացուկ խոսեց.

— Ո՛վ, իմ տեր սուլթան, իմ կյանքի արև,
Քո իմաստության առջևն ի՞նչ եմ յես.

Բայց իմ կարճ խելքով, ինչքան վոր գիտեմ
Քո մեծ տերության լի գանձարանում

Դու բաներ ունես ցարին զբերելիք,

Բաներ, վոր խելի հարկավոր չեն քեզ,

Իսկ նրբան անչափ շատ են ցանկալի:

Նեմանիչ Սավվի¹⁾ գավազանն ունես

Կոստանդին կայսեր²⁾ վոսկի թագն ունես,

Վոսկեբերանի շուրջառ ունես,

Սերբիայի հերոս Լազար արքայի

Ռազմի խաչանիչ գրքոչալն ունես...

Քո ինչի՞ն են պետք ես բաները վողջ,

Իսկ ցարին, գիտեմ, շատ են ցանկալի...»:

Շատ հավան կացավ սուլթանն ես խոսքին

Ու պատվեր տրվավ ծեր պատրիարքին,

Վոր կազմի բնծան ցարին զբերելիք

Ու դեսպաններին հանձնի Մոսկովի:

Ծերն, ինչպես գիտեր, ամենն հավաքեց

Ու դեսպաններին տալով՝ խրատեց.

— Գնացե՛ք, վորդի՛ք, տեր-աստված ձեզ հետ,

Բայց, մախկ արեք, մեծ ճամբով չերթաք,

Անտառով անցներ, սարով գընացեք...

Ուր վոր ե՛ շուտով մարդիկ կուղարկեն՝

Ուրեն ձեզնից եզ պարզենքը,

Վորոնցից բարձր ու նվիրական

Մեզ համար վոչինչ չըկա աշխարհքում...

Թող սըրա համար իմ գլուխը տան,

Ու իմ մեղավոր մարմինը կորչի,

1) Սերբիայի առաջին յակոսկոպոսապետն է ու կազմա-
կերպողը:

2) Բյուզանդիայի վերջին կայսրը:

Բայց հողիս արդեն փրկված է ընդմիջա»:

Ասով՝ ճանապարհ դրեց ծերունին:

Գոհ եր սուլթանը, վոր գլուխ հանեց

Եսքան հեշտությամբ ես դործը դժար,

Ու պարծենում եր ամենքի առջև,

Վոր եսքան եժան դուրս յեկավ տակից:

Ահա գալիս է Ղուչբեգի փաշեն:

Սրան ել պատմեց. հետը պարծեցավ.

— Հապա մի գըտի՛ր, Ղուչբեգի փաշա,

Ի՞նչ զբերված լինիմ Մոսկովի ցարին.—

Նեմանիչ Սավվի ցուպն եմ ուղարկել,

Կոստանդին կայսեր թագն եմ ուղարկել,

Վոսկեբերանի շուրջառն եմ զբերել,

Սերբիայի հերոս Լազար արքայի

Ռազմի խաչանիչ գրքոչն եմ զբերել:

Իմ ինչի՞ն էյին են ամենը պետք.

Իսկ ցարին շատ են պետք ու ցանկալի»:

Ու հարցմունք արավ Ղուչբեգի փաշեն.

— Եզ ո՞ւմ խորհրդով դու եսպես արի՞ր»:

Սուլթանը ուղիղ պատասխան տվեց.

— Ծեր պատրիարքի խորհրդով արի՞ր»:

Ու եսպես ասավ Ղուչբեգի փաշեն.

— Տեր սուլթան, ասով, իմ պայծառ արև,

Յեթե դու ցարին զբերել ես եղոնք,

Վորոնցից վոր թանգ եզ մարդկանց համար

Վոչ մի բան չըկա արար աշխարհքում,

Շատ լավ կանեյիր յեթե դրանց հետ

Ղըրկած լինեյիր և քո քաղաքի—

Մեծ Ըստամբուլի վոսկի բանալին:

Մին է, ավելի խայտառակ ձեռով

Հետո յես տալու Մոսկովի ցարին...

Դրանց վրա յեր մնում հաստատուն

Քո տերությունն ու քո զորությունը,

Վոր տրվիր տարան Մոսկովի ցարին»:

Ես վոր իմացավ՝ նոր գլխի ընկավ,

Ծափ դարկեց ապշած սուլթանը եստեղ

Ու պատվեր տվավ փաշին հաղձեպով.

11-28 4/6 94



— Ե՛յ փաշա, ասա՛վ, իմ հա՛վատարիմ՝
 Հա՛վաքիր իսկու՛յն իմ զորքն յենի՛չեր,
 Շուտ դեսպաններին հասի՛ր Մոսկովի,
 Խլի՛ր նրանցից պարգևներն ամեն,
 Վորոնց վրա վոր կանգնած եր հաստատ
 իմ տերութ՜յունն ու իմ զորութ՜յունը,
 Վոր տը՛լի տարան Մոսկովի ցարին»:
 Ու քաջ Ղուշբեգին զորքը հա՛վաքեց,
 Գնաց ու զընաց մեծ ճանապարհով,
 Վոր դեսպաններին հասնի՛ Մոսկովի,
 Ու վոչ մի ճամբում հետքները չըկա...
 Յետ դարձա՛վ, յեկա՛վ սուլթանին ասա՛վ,
 Թե վոչ մի ճամբում հետքները չըկա:
 Բըռնեց սուլթանի ցասումը անդուստլ,
 Ահարկու ձենով գոռաց իր փաշին.
 — Հե՛յ փաշա՛, կանչեց, շո՛ւտ աբա, փաշա՛
 Գընա սպանի՛ր ծեր պատրիարքին»:
 Եսպես վոր կանչեց՝ դուրս վազեց փաշեն,
 Գընաց ու բըռնեց ծեր պատրիարքին,
 Պառտեց թուրը, շողացրեց գըլխին.
 Ծեր պատրիարքը մեղմորեն խոսեց.
 — Ե՛յ փաշա, ասա՛վ, յե՛տ քաշի՛ր ձեռըդ,
 Մի՛ ներկիր հողը անմեղ արյունով,
 Թե չե կը կապվի ահը յերկրնքի՛
 Յերաշտ կը լինի շուրջ յերեք տարի,
 Ձի տալ յերկիրը ել բար ու պտուղ»:
 Ու լըսեց փաշեն ծերունու խոսքին՝
 Տարա՛վ կանգնեցրեց ծովի յեզերքին:
 Սուր թուրը նորից պոռտեց գըլխին,
 Ու նորից խոսեց արդար ծերունին.
 — Ե՛յ փաշա, ասա՛վ, քե՛զ քաշի՛ր ձեռըդ,
 Յե՛կ իմ արյունը մի՛ թափիր ծովը,

Թե չե փոթորիկ կանի սոսկալի,
 Ծովը կը հուզվի՛, կելնի ալեկոծ,
 Նավեր, նավակներ իր տակը կանի,
 Շենքեր, քաղաքներ կը ծածկի ջրով:
 Բայց փաշեն նրան ել ահանջ չարա՛վ,
 Չարկեց ու կտրեց գըլուխը ճերմակ:
 Ու եսպես մեռա՛վ արդար ծերունին,
 Ինքն արքայութ՜յուն գընաց յերկրնքում,
 Իսկ մեզ խընդութ՜յուն տվեց ես կյանքում:



	62
1. Մարկոն Ռամազանյանի գլխի յե խմում	3
2. Մարկոն վերացնում է սլակի հարկը	7
3. Թե ի՞նչ ուղարկեց Թուրքի սուլթանը Մոսկվայի ցարի ընծաների փոխարեն	14

Պատ. խմբ. Ն. Բուխանյան
Տեխ. խմբ. Ա. Գապարյան
Սրբազրիչ՝ Հ. Մանուկյան

Գլավիլիաի լիազոր՝ Վ.—2015. Հրատ. 4829
Պատվեր 213. Տիրաժ 4000.
Թուղթ 62X94. Տպ. 1 1/4 ժ.
Դեկ մամ. 24480 տիչ.

Հանձնված է արտադրության 28 փետրվարի 1939 թ.
Ստորագրված է արտադրության 29 մայիսի 1929 թ.

Պետհրատի I տպարան, Յերևան, Լենինի, 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0928072

13 АВГ 1939

403

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

11

28 416

ՕՎ. ԿՍՄԱՆՅԱՆ

Իձ սերբսկոց Էոսո

Դիձ Արմ. ՏՏՐ, Երևոն, 1939